ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. *Անունը, ազգանունը*

Լևոն Մկրտչյան

2. *Զբաղեցրած պաշտոնը*

ՀՀ կրթության և գիտության նախարար

3. *Գործուղման վայրը և ժամկետները*

Բելգիայի Թագավորություն, Բրյուսել, հոկտեմբերի 8- 10-ը

4. *Հրավիրող կողմը*

Եվրոպական հանձնաժողովի հետազոտությունների, գիտության և նորարարությունների հարցերով հանձնակատար Կառլոս Մոյդաշ

5. *Գործուղման նպատակը (աշխատանքային, որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը*)

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Եվրոպական հանձնաժողովի միջև Եվրոպական միության Հորիզոն-2020 ծրագրին մասնակցության վերաբերյալ» համաձայնագրի ստորագրումից հետո համաձայն կողմերի միջև ձեռք բերված պայմանավորվածության՝ քննարկել «Horizon 2020 Policy Support Facility» աջակցության գործիքի ներքո Հայաստանի գիտության ոլորտում իրականացվող ծրագրերի ընթացքը և գիտական նոր ծրագրերի ներդրման հնարավորությունները:

6. *Քննարկված թեմաները*

Եվրոպական հանձնաժողովի հետազոտությունների, գիտության և նորարարությունների հարցերով հանձնակատար Կառլոս Մոյդաշի հետ հանդիպման ընթացքում քննարկվել են՝

1) «Հայաստանի Հանրապետության կառավարության և Եվրոպական հանձնաժողովի միջև Եվրոպական միության «Հորիզոն-2020» ծրագրին մասնակցության վերաբերյալ» համաձայնագրի շրջանակում «Horizon 2020 Policy

Support Facility» աջակցության գործիքի ներքո Հայաստանում իրականացվող ծրագրերի ընթացքը և գիտական նոր ծրագրերի ներդրման հնարավորությունները:

2) Հայաստանում հատուկ գրասենյակի՝ «Գիտական ծրագրերի ինտեգրման աջակցության կենտրոն» հիմնադրամի ձևավորման և գործունեության հիմնախնդիրները: Հանձնակատար Մոյդաշը առանձնահատուկ կարևորեց Հայաստանում վերջերս ստեղծված հիմնադրամի դերը, որն առանցքային դեր կունենա ԵՄ աջակցությամբ «Հորիզոն 2020» հետազոտական և նորարական ծրագրերն առավել արդյունավետ իրականացնելու համար:

3) «Հորիզոն 2020» ծրագրի գործիքների կիրարկումը՝ Հայաստանի գիտական կազմակերպությունների ամբողջական համակարգի կառուցվածքային բարեփոխումներ իրականացնելու նպատակով:

4) «ԹՈՒՄՈ» ծրագիրը և 2020 թվականից հետո «Հորիզոն-2020» ծրագրի աշխատանքային նախագծերը:

7. *<u>Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը</u>*

Այցի ընթացքում հանդիպում եմ ունեցել Եվրոպական հանձնաժողովի հետազոտությունների, գիտության և նորարարությունների հարցերով հանձնակատար Կառլոս Մոյդաշի հետ: Վերջինս, ողջունելով և կարևորելով իմ այցը, անդրադարձավ իր այցելությանը Հայաստան՝ որակելով այն որպես ջերմ ու արդյունավետ համագործակցության սկիզբ և հնարավորություն: Հայաստան այցի ընթացքում հանձնակատար Մոյդաշը և իր գործընկեր Եվրահանձնաժողովի ընդլայնման հարցերով հանձնակատար Յոհաննես Հահնը շատ տպավորված են եղել ԹՈՒՄՈ կենտրոնով:

Հանձնակատար Մոյդաշը նշեց, որ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն Եվրոպական Միությունը նախատեսել ֆինանսական աջակցություն՝ 2017թ. տարեկան գործողությունների ծրագրի շրջանակում, որը Եվրոպական Միության կողմից կհաստատվի 2017 թվականի հոկտեմբերին: Այդ աջակցության մեծ մասը կտրամադրվի ԹՈՒՄՈ կենտրոնին, իսկ մնացածը կուղղվի այլ կրթական ծրագրերի իրականացմանը:

Հանձնակատար Մոյդաշը կարևորեց 2017 թվականի հոկտեմբերի 30-ին ԵՄ կողմից Արևելյան Գործընկերության երկրների համար հայտարարվող Sustainable Process

Industry («SPIRE», ծրագրի բյուջեն մոտ 98 մլն եվրո) ծրագրի մրցույթին Հայաստանի մասնակցությունը:

Կարևորվեց նաև Հայաստանում «Գիտական ծրագրերի ինտեգրման աջակցության կենտրոն» հիմնադրամի ձևավորումը՝ «Հորիզոն 2020» ծրագրի պահանջներին Հայաստանի գիտական հանրությանը նախապատրաստելու և համապատասխան խորհրդատվություն տրամադրելու համար:

Հանդիպման ընթացքում շեշտադրվել է այն հանգամանքը, որ «Հորիզոն 2020» ծրագրին մասնակցությունը կնպաստի Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպություններում և բուհերում գործող գիտական խմբերի՝ հետազոտությունների եվրոպական տարածք ինտեգրվելուն, համաշխարհային մակարդակի գիտական հետազոտություններում անմիջական մասնակից դառնալուն, ինչպես նաև ժամանակակից հասարակական մարտահրավերների լուծմանն ուղղված հետազոտություններում և մշակումներում իրենց ակտիվ դերակատարությամբ հանդես գալուն:

Հանձնակատար Մոյդաշը առաջարկեց նաև իրականացնել նորաստեղծ Հիմնադրամի կարողությունների զարգացման ծրագիր, մասնավորապես Թվինինգ աջակցության գործիքի շրջանակներում, ինչպես նաև օգտագործել «HORIZON 2020 Policy Support Facility» գործիքը:

Ներկայումս աշխատանքներ են իրականացվում Հիմնադրամի կարողությունների հզորացմանն ուղղված ԵՄ Թվինինգ ծրագրի հայտի մշակման աշխատանքները:

Այցի ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց պարբերաբար կազմակերպել հանդիպումներ՝ իրականացվող ծրագրերի ընթացքն ու արդյունավետությունը համատեղ քննարկելու նպատակով:

8. *Գործուղվողը*

ՀՀ կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյան

9. *Ստորագրությունը, ամսաթիվը*

20.10.2017